10

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-20/24-I/STCOPHCH

## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Սահակ Պարույրի Գասպարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 641 513 068 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

## 3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 641 513 068 ՀՀ դրամ:

## 4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **Ակադեմիա** | **Կազմակերպություն** |
| --- | --- |
| ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ |

| | |
|---|---|
| ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 | Ազատության պող. 26 |
| Հ/հ՝ 900011024115 | Հ/հ՝ 900018005307 |
| ՀՎՀՀ՝ 00005673 | ՀՎՀՀ՝ 01008638 |
| ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |

| | |
|---|---|
| Նախագահ՝ | Կազմակերպության տնօրեն՝ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ | Սահակ Պարույրի Գասպարյան |
| Կ. Տ. | Կ. Տ. |

Ծրագրի գիտական ղեկավար՝ ________ (ստորագրություն) Գասպարյան Սահակ Պարույրի

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-20/24-I/STCOPHCH պայմանագրի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Սահակ Պարույրի Գասպարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-20/24-I/STCOPHCH պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 641 513 068 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

**Ակադեմիա**

Նախագահ՝

______________
(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.

**Կազմակերպություն**

տնօրեն՝

______________
(ստորագրություն)

Սահակ Պարույրի Գասպարյան

Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-20/24-I/STCOPHCH պայմանագրի

# ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

| Ակնկալվող արդյունք | Քանակ |
|---|---|
| ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝ | 35 |
| ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝ | 10 |
| ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝ | 20 |
| Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝ | 10 |
| Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝ | 0 |
| Գրքեր, մենագրություններ՝ | 0 |
| Գիտաժողովի նյութեր՝ | 25 |
| Արտոնագրեր՝ | 1 |

Կազմակերպության տնօրեն՝ ________ (ստորագրություն) Սահակ Պարույրի Գասպարյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ ________ (ստորագրություն) Ներսեսյան Լուսինե Էդուարդի

Կ. Տ.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-20/24-I/STCOPHCH պայմանագրի

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

| Հ/հ | Հոդվածի անվանումը | Ֆինանսավոր-ման չափը | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ (20%) | 2-րդ եռամսյակ (25%) | 3-րդ եռամսյակ (25%) | 4-րդ եռամսյակ (30%) |
| 1. | աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը | 585 794 100 | 117 158 820 | 146 448 525 | 146 448 525 | 175 738 230 |
| 2. | տնտեսական ծախսեր՝ | 43 303 192 | 8 660 638 | 10 825 798 | 10 825 798 | 12 990 958 |
| 3. | այլ ծախսեր՝ | 12 415 776 | 2 483 155 | 3 103 944 | 3 103 944 | 3 724 733 |
| Ընդամենը՝ | | 641 513 068 | 128 302 613 | 160 378 267 | 160 378 267 | 192 453 921 |

Կազմակերպության տնօրեն՝ ____________ (ստորագրություն) Սահակ Պարույրի Գասպարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ ____________ (ստորագրություն) Սուսաննա Այոշայի Բաբայան

Կ. Տ.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-20/24-I/STCOPHCH պայմանագրի

## ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

*ՀՀ դրամ*

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Ֆինանսավորման ծավալը |
|---|---|---|
| | **Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝** | **43 303 192** |
| 1. | *էլեկտրաէներգիայի ծառայություն* | 25 400 000 |
| 2. | *գազի ծառայություն* | 11 500 000 |
| 3. | *ջրամատակարարման ծառայություն* | 3 530 000 |
| 4. | *կապի ծառայություն* | 2 300 000 |
| 5. | *աղբահանություն* | 573 192 |
| | **Այլ ծախսեր, այդ թվում՝** | **12 415 776** |
| 1. | Սարքեր և սարքավորումներ | 1 000 000 |
| 2. | Բաժանորդագրություն և այլ ծախսեր | 2 000 000 |
| 3. | Նյութեր | 9 415 776 |

Կազմակերպության տնօրեն՝ ________ (ստորագրություն) Սահակ Պարույրի Գասպարյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ ________ (ստորագրություն) Սուսաննա Ալյոշայի Բաբայան

Կ. Տ.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-20/24-I/STCOPHCH պայմանագրի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
## «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

ՀՀ դրամ

| ազգանուն անուն հայրանուն | պաշտոն | A | B | C | D | E |
|---|---|---|---|---|---|---|
| Վարչասպասարկող անձնակազմ | | | | | | |
| Գասպարյան Սահակ Պարույրի | Տնօրեն | 500 000 | 12 | հիմնական | 40 | 6 000 000 |
| Հակոբյան Ռոբերտ Մամիկոնի | Գիտական հարցերի գծով տնօրենի տեղակալ | 400 000 | 12 | հիմնական | 40 | 4 800 000 |
| Հարությունյան Մեսրոպ Գուրգենի | ֆինանսական և տնտեսական հարցերով տնօրենի տեղակալ | 300 000 | 12 | հիմնական | 40 | 3 600 000 |
| Ներսեսյան Լուսինե Էդուարդի | գիտ. քարտուղար | 350 000 | 12 | հիմնական | 40 | 4 200 000 |
| Առաքելյան Մարիամ Սուրենի | ԿԲ վարիչ | 200 000 | 12 | հիմնական | 40 | 2 400 000 |
| Կիրակոսյան Մարինե Ռոբերտի | ԿԲ ավագ տեսուչ | 125 000 | 12 | հիմնական | 40 | 1 500 000 |
| Մանուկյան Արտակ Համայակի | մատակարարման բաժնի վարիչ | 245 000 | 12 | հիմնական | 40 | 2 940 000 |
| Բաբայան Ասլան Մանվելի | գլխավոր էներգետիկ | 215 000 | 12 | հիմնական | 40 | 2 580 000 |
| Թորոսյան Շուշանիկ Կոլյայի | գործավար | 145 000 | 12 | հիմնական | 40 | 1 740 000 |
| Բաբայան Սուսաննա Ալյոշայի | գլխավոր հաշվապահ | 300 000 | 12 | հիմնական | 40 | 3 600 000 |
| Բաղդասարյան Եվգենյա Բորիսի | գլխավոր հաշվապահի տեղակալ | 195 000 | 12 | հիմնական | 40 | 2 340 000 |
| Գրիգորյան Լորետա Ջոնիկի | ավագ հաշվապահ | 185 000 | 12 | հիմնական | 40 | 2 220 000 |
| Շահինյան Մարիտա Եղիշի | ավագ հաշվապահ | 175 000 | 12 | հիմնական | 40 | 2 100 000 |
| Պապյան Զարինե Միքայելի | գնումների համակարգող | 165 000 | 12 | հիմնական | 40 | 1 980 000 |
| Անանյան Սարգիս Գուրգենի | պահակապետ | 125 000 | 12 | հիմնական | 40 | 1 500 000 |
| Սիմոնյան Հակոբ Դերենիկի | պահակ | 139 700 | 12 | հիմնական | 40 | 1 676 400 |
| Միսակյան Աշոտ Պատվականի | պահակ | 139 700 | 12 | հիմնական | 40 | 1 676 400 |
| Բալյան Էլմիրա Հայկի | հավաքարար | 100 000 | 12 | հիմնական | 40 | 1 200 000 |
| Հակոբյան Մարթա Գեղամի | հավաքարար | 100 000 | 12 | հիմնական | 30 | 1 200 000 |
| Հովհաննիսյան Լարիսա Լեմենի | հավաքարար | 72 200 | 12 | հիմնական | 30 | 866 400 |
| Հովհաննիսյան Քրիստինե Վարդանի | հավաքարար | 77 000 | 12 | հիմնական | 30 | 924 000 |
| Սիմոնյան Հարություն Մնացականի | պարետ | 120 000 | 12 | հիմնական | 40 | 1 440 000 |
| Խաժակյան Արա Աշոտի | պարետ | 160 000 | 12 | հիմնական | 40 | 1 920 000 |
| Խաչատրյան Արման Պետիկի | օժանդակ բանվոր | 90 000 | 12 | համատեղություն | 20 | 1 080 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Աստախով Իվան Վասիլի | ավտոտնտեսության վարիչ | 120 000 | 12 | հիմնական | 40 | 1 440 000 |
| Բարիկյան Սերգեյ Ալբերտի | էլեկտրիկ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Մկրտչյան Միքայել Ալեքսանդրի | փականագործ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Բալոյան Դիմիտր Անդրանիկի | այգեպան | 115 000 | 12 | հիմնական | 40 | 1 380 000 |
| Բաղրամյան Վլադիմիր Գեորգիի | այգեպան | 115 000 | 12 | հիմնական | 40 | 1 380 000 |
| Սաբելնիկովնա Լիլիյա Վլադիմիրի | Գրադարանի վարիչ | 125 000 | 12 | հիմնական | 40 | 1 500 000 |
| Գրիգորյան Երվանդ Վարշամի | ՕՔԻ պարետ | 120 000 | 12 | հիմնական | 40 | 1 440 000 |
| Կիրակոսյան Լեվիկ Վազգենի | փականագործ | 130 000 | 12 | հիմնական | 40 | 1 560 000 |
| Գրիգորյան Վիկտորյա Հմայակի | հավաքարար | 150 000 | 12 | հիմնական | 40 | 1 800 000 |
| Մնացականյան Գրիգոր Գարեգինի | պահակ | 139 700 | 12 | հիմնական | 40 | 1 676 400 |
| Մովսիսյան Ալբերտ Հենրիկի | պահակ | 139 700 | 12 | հիմնական | 40 | 1 676 400 |
| Գաբրիելյան Սամվել Գեղամի | պահակ | 139 700 | 12 | հիմնական | 40 | 1 676 400 |
| Օսիպյան Բորիս Բենիկի | փականագործ | 115 000 | 12 | հիմնական | 40 | 1 380 000 |
| Վարդանյան Կարեն Գեղամի | ինտ.ցանցային ինժեներ | 145 000 | 12 | հիմնական | 40 | 1 740 000 |
| Շիրակյան Աննա Միհրանի | գործավար | 125 000 | 12 | հիմնական | 40 | 1 500 000 |
| Ղուլիջանյան Մեսրոպ Վահանի | ՄԿՈՒԿ-ի ցանցային ադմինիստրատոր | 52 000 | 12 | համատեղություն | 20 | 624 000 |
| Մաթևոսյան Խոնարիկ Ջեգվելի | ՄԿՈՒԿ-ի հավաքարար | 95 700 | 12 | հիմնական | 40 | 1 148 400 |
| Աղաջանյան Գագիկ Արամայիսի | ՄԿՈՒԿ-ի պահակ | 139 700 | 12 | հիմնական | 40 | 1 676 400 |
| Նավոյան Կարեն Համլետի | պարետ | 268 000 | 12 | հիմնական | 40 | 3 216 000 |
| Նիկողոսյան Տիգրան Պետիկի | հեռախոսի վարպետ | 50 000 | 12 | համատեղություն | 20 | 600 000 |
| Նաղդալյան Տիգրան Գրիգորի | Իրավաբան | 150 000 | 12 | համատեղություն | 20 | 1 800 000 |
| Ղարիբջանյան Սուրեն Բագրատի | ավագ ապրանքագետ | 125 000 | 12 | հիմնական | 40 | 1 500 000 |
| Դանիելյան Աննման Ջումշուդի | Գրադարանավար | 115 000 | 12 | հիմնական | 40 | 1 380 000 |
| Հարությունյան Արտակ Մեսրոպի | Ապակեփչող | 208 000 | 12 | հիմնական | 40 | 2 496 000 |
| Քոչարյան Սուրեն Լևոնի | Ավագ ճարտարագետ | 156 100 | 12 | հիմնական | 40 | 1 873 200 |
| Գիտական անձնակազմ | | | | | | |
| Գիտահետազոտական ինստիտուտ<br>Ա.Լ.Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ | | | | | | |
| Լաբորատորիա<br>Սիրտ-անոթային համակարգի գործունեությունը կարգավորող նյութերի դիզայն և սինթեզի | | | | | | |
| Աղեկյան Ասյա Աղեկի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Վարդանյան Սվետլանա Օնիկի | Ավագ գիտաշխատող | 150 150 | 12 | հիմնական | 20 | 1 801 800 |
| Ավագյան Ալինա Սուրենի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Մկրյան Գևորգ Գուրգենի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Մարգարյան Ռուզաննա Էդուարդի | Գիտաշխատող | 115 100 | 12 | հիմնական | 20 | 1 381 200 |
| Սարգսյան Ամալյա Բագրատի | Գիտաշխատող | 172 650 | 12 | հիմնական | 30 | 2 071 800 |
| Ստեփանյան Գայանե Վարդանի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Սարգսյան Գայանե Զարզանդի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Լաբորատորիա<br>Հակաքաղցկեղային միացությունների սինթեզի | | | | | | |
| Հարությունյան Արթուր Արմենի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Դիլանյան Սիրանուշ Վոլոդյայի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Իսախանյան Անուշ Հուսիկի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Իսրայելյան Սիլվա Գրիգորի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Հակոբյան Նաիրա Ջավենի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Սումբատյան Անահիտ Սումբատի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Սաֆարյան Մերի Սերգեյի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Հակոբյան Մարինե Ռուբիկի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Հովասյան Ջարուհի Արմենի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Մարտիրոսյան Հասմիկ Ռաֆիկի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Ֆիզիոլոգիապես ակտիվ ամինոթթուների և պեպտիդների | | | | | | |
| Թոփուզյան Վիգեն Օնիկի | Ղեկավար | 499 800 | 12 | հիմնական | 40 | 5 997 600 |
| Գրիգորյան Ստեփան Գրիգորի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Հովհաննիսյան Արմեն Արամի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Ֆարմազյան Զոյա Մելիքի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Աղաբաբյան Հասմիկ Գրիգորի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Թոսունյան Սյուզաննա Ռուդիկի | Գիտաշխատող | 0 | 0 | հիմնական | 30 | 0 |
| Աթաբեկյան Մարի Լյովայի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Հակոբյան Էդվարդ Հակոբի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Մակիչյան Անի Տիգրանի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Մանգասարյան Սիրվարդ Հենրիխի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Հովհաննիսյան Նոնա Արամի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Շուրէլեան Սարօ Ռաֆֆիի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Մազմանյան Գևորգ Վարդանի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Լաբորատորիա<br>Հոգեմետ միացությունների սինթեզի | | | | | | |
| Պարոնիկյան Երվանդ Գառնիկի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Սիրականյան Սամվել Նապոլեոնի | Առաջատար գիտաշխատող | 420 000 | 12 | հիմնական | 40 | 5 040 000 |
| Դաբաևա Վալյա Վարդանի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Բաղդասարյան Մերի Ռաֆաելի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Հովակիմյան Անուշ Աշոտի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Հակոբյան Էլմիրա Կարապետի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Բարխուդարյանց Իռեն Միխաիլի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Եգորյան Հասմիկ Ատոմի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Խումբ<br>ԻՈՆԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔԻՄԻԱՅՈՒՄ | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հարությունյան Արփինե Սաշայի | Ղեկավար | 349 900 | 12 | հիմնական | 40 | 4 198 800 |
| Դաշյան Շուշանիկ Շամիրի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Սաֆարյան Էլյա Պողոսի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Նիկողոսյան Տիգրանուհի Անանիկի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | համատեղություն | 20 | 1 080 000 |
| Կարապետյան Տիգրանուհի Մամիկոնի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Լաբորատորիա<br>Հակաբիոտիկների սինթեզի | | | | | | |
| Գասպարյան Սահակ Պարույրի | Ղեկավար | 224 900 | 12 | ներքին համատեղություն | 20 | 2 698 800 |
| Քոչարով Սերգեյ Լևոնի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Ալեքսանյան Մարինա Վլադիմիրի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Գևորգյան Քնարիկ Անդրանիկի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Հարությունյան Ամալյա Դանիելի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Գալստյան Մարիամ Վրեժի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Մանուկյան Հերմինե Սարգսի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Հարությունյան Լուսինե Մերուժանի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Սպիրոցիկլիկ միացությունների սինթեզի | | | | | | |
| Մարկոսյան Աշոտ Իշխանի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Գաբրիելյան Սիրանուշ Համբարձումի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Այվազյան Անի Սերյոժայի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Բաղդասարյան Անի Սամվելի | Կրտսեր գիտաշխատող | 0 | 0 | հիմնական | 40 | 0 |
| Հովհաննիսյան Արթուր Շահենի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Ալահվերդիևա Դիանա Գենադիի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Թունաբանության և քիմիաթերապիայի | | | | | | |
| Մուրադյան Ռաֆայել Եղիազարի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Ստեփանյան Հրաչյա Մովսեսի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Արսենյան Ֆլորա Հայկի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Ներսեսյան Լուսինե Էդուարդի | Ավագ գիտաշխատող | 150 150 | 12 | ներքին համատեղություն | 20 | 1 801 800 |
| Դանիելյան Իրինա Ստեփանի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Բունիաթյան Ժաննա Մամիկոնի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Առաքելյան Հասմիկ Հենրիկի | Գիտաշխատող | 172 650 | 12 | համատեղություն | 30 | 2 071 800 |
| Թումաջյան Հասմիկ Երվանդի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Ահարոնյան Անահիտ Սարգսի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Մկրտչյան Գոհար Սահակի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Ավակիմյան Ջուլետտա Աշոտի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Սաֆարյան Անահիտ Սերգեյի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Մարտիրոսյան Լևոն Ալեքսանի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գևորգյան Աննա Վրեժի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Սաքեյան Հռիփսիմե Դավթի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Ստեփանյան Հասմիկ Հրայրի | Ավագ լաբորանտ | 117 075 | 12 | հիմնական | 30 | 1 404 900 |
| Համբարձումյան Աիդա Կարապետի | Ավագ լաբորանտ | 156 100 | 12 | հիմնական | 40 | 1 873 200 |
| Լաբորատորիա<br>Դեղաբանության և պատոհիստոլոգիայի | | | | | | |
| Գասպարյան Հրաչիկ Վահրամի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Պարոնիկյան Ռուզաննա Գառնիկի | Առաջատար գիտաշխատող | 420 000 | 12 | հիմնական | 40 | 5 040 000 |
| Հարությունյան Հայկ Աշոտի | Ավագ գիտաշխատող | 150 150 | 12 | համատեղություն | 20 | 1 801 800 |
| Բուլյան Սոնա Ազատի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Հարությունյան Սեդա Հայրապետի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Նազարյան Իվետտա Մարատի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Պողոսյան Անահիտ Երվանդի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Գրիգորյան Անահիտ Սուրենի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Ղուկասյան Թևոս Ղուկասի | Գիտաշխատող | 115 100 | 12 | հիմնական | 20 | 1 381 200 |
| Ծատինյան Անիկ Սուրենի | Գիտաշխատող | 115 100 | 12 | հիմնական | 20 | 1 381 200 |
| Շիրինյան Մարինե Էդգարի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Արշակյան Լիլիթ Մարտինի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Առաքելյան Տաթևիկ Ավետիսի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Պահության Նվարդ Հարությունի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Գրիգորյան Մարինե Սենիկի | Կրտսեր գիտաշխատող | 220 000 | 12 | հիմնական | 40 | 2 640 000 |
| Հունանյան Հովհաննես Աշոտի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Ալավերդյան Ժաննա Ռաֆայելի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Սարգսյան Մարինա Վաչագանի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Միրզոյան Լիլիթ Սամվելի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Հարությունյան Լուսինե Սարգիսի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Ավանեսովա Էլմիրա Միքայելի | Ավագ լաբորանտ | 78 050 | 12 | հիմնական | 20 | 936 600 |
| Նավոյան Քրիստինե Համլետի | Ավագ լաբորանտ | 156 100 | 12 | հիմնական | 40 | 1 873 200 |
| Գիտահետազոտական ինստիտուտ<br>Օրգանական քիմիայի ինստիտուտ | | | | | | |
| Խումբ<br>Ֆիզ. քիմիական հետազոտությունների | | | | | | |
| Ավետիքյան Մելադա Նիկոլայի | Կրտսեր գիտաշխատող | 135 000 | 12 | հիմնական | 30 | 1 620 000 |
| Բաղրամյան Գայանե Ռոբերտի | Ավագ լաբորանտ | 117 075 | 12 | հիմնական | 30 | 1 404 900 |
| Լաբորատորիա<br>Ամինամիացությունների | | | | | | |
| Զուխաջյան Էմմա Հովսեփի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Հայրապետյան Լիլիթ Վալերիի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Գևորգյան Հասմիկ Ռոբերտի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մկրտչյան Հայարփի Սամվելի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Ալոյան Անի Ղազարի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Բնական չհագեցած միացությունների | | | | | | |
| Սարգսյան Հմայակ Բաբկենի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Հոբոսյան Նինա Գառնիկի | Առաջատար գիտաշխատող | 420 000 | 12 | հիմնական | 40 | 5 040 000 |
| Բայան Քրիստինե Վալերիկի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Մակարյան Գոհար Մերուժանի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Պողոսյան Հայկանուշ Ռուբենի | Կրտսեր գիտաշխատող | 135 000 | 12 | հիմնական | 30 | 1 620 000 |
| Ղալեչյան Լիլիթ Մերուժանի | Կրտսեր գիտաշխատող | 0 | 12 | հիմնական | 20 | 0 |
| Հակոբյան Լիլիթ Կոմիտասի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Ազիզյան Մանուշակ Գարիկի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Մովսիսյան Լուսինե Արամի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Ազոտային հետերոցիկլերի | | | | | | |
| Դանագուլյան Գևորգ Հրաչի | Ղեկավար | 224 900 | 12 | համատեղություն | 20 | 2 698 800 |
| Հասրաթյան Անի Հայկի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Դանագուլյան Աննա Գևորգի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Խաչատրյան Լուսինե Սահակի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Առաքելյան Մելինե Ռոբերտի | Կրտսեր գիտաշխատող | 0 | 0 | հիմնական | 40 | 0 |
| Ղարիբյան Վաչե Կարենի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Բոյան Լիլյա Ալբերտի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Ֆոսֆորօրգանական միացություններիի | | | | | | |
| Գասպարյան Գայանե Ծատրիկի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Խաչիկյան Ռայա Ջահանի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Մինասյան Գրիգոր Հրանտի | Գիտաշխատող | 270 200 | 12 | հիմնական | 40 | 3 242 400 |
| Պողոսյան Արտավազդ Սերյոժայի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| Բիչախչյան Արփենիկ Սեյրանի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Խաչատրյան Տարոն Թադևոսի | Գիտաշխատող | 270 200 | 12 | հիմնական | 40 | 3 242 400 |
| Մարդիյան Զորայր Զորիկի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| Դերձյան Լիանա Վանիկի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Հովակիմյան Զարուհի Հրանտի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Վարդանյան Նարեկ Ռոբերտի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Գասպարյան Լիլիթ Ռոմիկի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Լաբորատորիա<br>Կիրառական քիմիայի պրոբլեմների | | | | | | |
| Աթթարյան Հովհաննես Սարգսի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Բադալյան Կարինե Սամսոնի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մարկոսյան Աննա Ջիվանի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Խաչատրյան Հասմիկ Նվերի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Մկրտչյան Դավիթ Արշավիրի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Բիչախչյան Լիլիթ Աշոտի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | համատեղություն | 20 | 1 080 000 |
| Սուքոյան Աստղիկ Հակոբ | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Նասիբյան Մարիա Լևոնի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Ասրյան Ալեն Գարրիի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Խումբ<br>N☒Պարունակող հետերոցիկլերի սինթեզի և C☒H ֆունկցիոնալացման նոր մեթոդաբանությունների մշակում | | | | | | |
| Հակոբյան Ռոբերտ Մամիկոնի | Ղեկավար | 174 950 | 12 | ներքին համատեղություն | 20 | 2 099 400 |
| Ալեքսանյան Աշխարուհի Ղևոնդի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Նիկողոսյան Հասմիկ Հակոբ | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Խառատյան Լևոն Ալիկի | Ավագ լաբորանտ | 78 050 | 12 | հիմնական | 20 | 936 600 |
| Լաբորատորիա<br>Պոլիմերային դիսպերսիաների | | | | | | |
| Հովհաննիսյան Առնոս Աշակի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Գրիգորյան Գայանե Կաղլոսի | Ավագ գիտաշխատող | 150 150 | 12 | համատեղություն | 20 | 1 801 800 |
| Գրիգորյան Նարինե Համլետի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Նազարյան Արսեն Գվիդոնի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| Մեծոյան Մարիամ Կարապետի | Ավագ լաբորանտ | 156 100 | 12 | հիմնական | 40 | 1 873 200 |
| Զաքարյան Հասմիկ Սուրենի | Ավագ լաբորանտ | 117 075 | 12 | հիմնական | 30 | 1 404 900 |
| Խումբ<br>Ազոտօրգանական միացությունների | | | | | | |
| Հովսեփյան Վարդուհի Սուրենի | Ղեկավար | 349 900 | 12 | հիմնական | 40 | 4 198 800 |
| Սարգսյան Գայյա Տիգրանի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Երեմյան Աշխեն Բեջանի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Խամիսյան Շաքե Գրիգորի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Դիանա Հարությունյան Արտակի | Ավագ լաբորանտ | 78 050 | 12 | հիմնական | 20 | 936 600 |
| Խումբ<br>Ազոմեթինների | | | | | | |
| Խաչատրյան Անուշ Խաչիկի | Ղեկավար | 349 900 | 12 | հիմնական | 40 | 4 198 800 |
| Բաղդասյան Ալիկ Էդուարդի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Սարգսյան Անուշ Ալիկի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Ավագյան Կատյա Արսենի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Սիմոնյան Անահիտ Գրիգորի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Զոհրաբյան Անգին Նորիկի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Գիտահետազոտական ինստիտուտ<br>Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրման կենտրոն | | | | | | |
| Լաբորատորիա<br>Ռենտգեն հետազոտությունների և մասս. սպեկտրոսկոպիայի | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Կարապետյան Հարություն Արշալույսի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Այվազյան Արմեն Գրիգորիի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| Դավինյան Անդրանիկ Մկրտիչի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Մնացականյան Արմենուհի Արմենի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Ասլանյան Արման Ռուբիկի | Լաբորանտ | 119 800 | 12 | հիմնական | 40 | 1 437 600 |
| Սարգսյան Զարեհ Մանվելի | Լաբորանտ | 119 800 | 12 | հիմնական | 40 | 1 437 600 |
| Բաղրամյան Աննա Էդուարդի | Լաբորանտ | 119 800 | 12 | հիմնական | 40 | 1 437 600 |
| Նավոյան Ռազմիկ Շիրազի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Լաբորատորիա Օպտիկական սպեկտրոսկոպիայի | | | | | | |
| Մամյան Սուրեն Սերյոժայի | Ղեկավար | 499 800 | 12 | հիմնական | 40 | 5 997 600 |
| Մարտիրոսյան Գարիկ Գեորգիի | Առաջատար գիտաշխատող | 210 000 | 12 | համատեղություն | 20 | 2 520 000 |
| Ներսիսյան Մանուկ Նեստերի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| Ազիզյան Արսեն Սերյոժայի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Հովհաննիսյան Աստղիկ Արտակի | Գիտաշխատող | 115 100 | 12 | համատեղություն | 20 | 1 381 200 |
| Հովհաննիսյան Գոհար Շահենի | Գիտաշխատող | 230 200 | 12 | հիմնական | 40 | 2 762 400 |
| Ավագյան Նելլի Արամի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Գրիգորյան Սյուզի Մանվելի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | համատեղություն | 20 | 1 080 000 |
| Հարությունյան Լուսինե Սամվելի | Կրտսեր գիտաշխատող | 90 000 | 12 | հիմնական | 20 | 1 080 000 |
| Հովհաննիսյան Արբակ Հայկի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Աղեկյան Հայկ Արամի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Լաբորատորիա ՄՄՌ մագնիսա-ռեզոնանսային սպեկտրոսկոպիայի | | | | | | |
| Փանոսյան Հենրիկ Աղավարդի | Ղեկավար | 449 800 | 12 | հիմնական | 40 | 5 397 600 |
| Շահխաթունի Ալեքսան Գևորգի | Առաջատար գիտաշխատող | 420 000 | 12 | հիմնական | 40 | 5 040 000 |
| Շահխաթունի Աստղիկ Ալեքսանի | Ավագ գիտաշխատող | 300 300 | 12 | հիմնական | 40 | 3 603 600 |
| Դանղյան Մարկ Յուրիի | Կրտսեր գիտաշխատող | 180 000 | 12 | հիմնական | 40 | 2 160 000 |
| Խանամիրյան Անահիտ Սիմոնի | Ավագ լաբորանտ | 156 100 | 12 | հիմնական | 40 | 1 873 200 |
| Պետրոսյան Սոֆի Արմենի | Լաբորանտ | 59 900 | 12 | հիմնական | 20 | 718 800 |
| Խումբ Ինժեներային սպասարկում | | | | | | |
| Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝ | | | | | | 22614600 |
| Ընդհանուր գումար՝ | | | | | | 585 794 100 |

Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Սահակ Պարույրի Գասպարյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ (ստորագրություն) (ԱԱՀ)

Հավելված N 5
«29» հունվարի 2024 թ.
N 1-20/24-1/STCOAUCH պայմանագրի

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

**«Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում: Կիրառական նպատակներով նոր նյութերի ստեղծում»** ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Նոր դեղամիջոցների որոնում, չհագեցած և հետերոցիկլիկ միացությունների սինթեզի եղանակների մշակում, դրանց փոխարկումների առանձնահատկությունների ուսումնասիրում, ֆիզիկո-քիմիական և դեղաբանական արդի եղանակներով կենսաբանորեն ակտիվ միացությունների ուսումնասիրում, կառուցվածքի և ակտիվության միջև կապի բացահայտում, սինթեզված միացությունների կիրառման ոլորտների որոնում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Գիտական հետազոտությունների արդիականություն, գիտական նորույթ, տվյալների վերարտադրելիություն, տվյալների համապատասխանություն միջազգային չափորոշիչներին, աշխատանքների կիրառական ուղղվածություն:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գործունեության հիմնական խնդիրն է՝ նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների որոնումը, դրանց քիմիական, կենսաքիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլ հատկությունների ուսումնասիրումը: Կենտրոնն իր կազմում ընդգրկված ՀՀ ԳԱԱ երեք հիմնարկների՝ Ա.Լ.Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի և Օրգանական քիմիայի ինստիտուտների, Մոլեկուլի կառույցի ուսումնասիրման կենտրոնի օրգանիկ քիմիկոսների, ֆիզիկաքիմիկոսների, դեղաբանների ջանքերի միավորմամբ աշխատանքները նպատակաուղղելու է նոր արժեքավոր հատկություններով օժտված նյութերի ստեղծմանը:
2024թ. ՕԴՔԳՏԿ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման համար անհրաժեշտ միջոցներն ուղղված կլինեն Կենտրոնի ՎԱԱ (50,75 հաստիք), քիմիական 12 լաբորատորիաների և 2 խմբերի, ֆիզիկաքիմիական 3 լաբորատորիաների և դեղաբանական 2 լաբորատորիաների աշխատանքների կազմակերպմանը:
ՆՕՔԻ-ի գործունեության արդյունքում նախորդ տարիներին ստացվել և ուսումնասիրվել են երեք տասնյակից ավելի նոր ֆիզիոլոգիապես ակտիվ միացություններ, որոնց հետագա խորը ուսումնասիրությունները կհանգեցնեն նոր դեղամիջոցների ստեղծմանը: Պետք է հիշատակել ՀԽՍՀ ԳԱ ՆՕՔԻ-ի կողմից ստեղծված և

արտադրված 14 անուն դեղամիջոցները, որոնցից մի քանիսն այսօր էլ մեծ պահանջարկ ունեն (Գանգլերոն, Թիոդին, Կապրոֆեր, Դիտիլին):

Օրգանական սինթեզի բնագավառում հետազոտություններ կիրականացվեն ամինաթթուների, պեպտիդների, չհագեցած ու արոմատիկ ածխաջրածինների, նուկլեինաթթուների ածանցյալների, հետերոցիկլիկ, ֆոսֆորօրգանական, պոլիմերային դիսպերս միացությունների սինթեզի և ռեակցիաների մեխանիզմների բացահայտման ուղղությամբ:

Նոր ուղղություն է հանդիսանում Կենտրոնում սինթեզվող տեղակալված պիրիդինների, պիրազոլների ու այլ հետերոցիկլիկ համակցված միացությունների հիման վրա նոր իոնական հեղուկների (ԻՀ) ստեղծումը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունների և կիրառման հնարավորությունների ուսումնասիրությունը:

Աշխատանքներ կտարվեն հայտնի միացությունների ավելի մատչելի սինթեզի մեթոդների որոնման և առաջարկման, ինչպես նաև փոխարկման համար կարևոր ելանյութեր հանդիսացող միացությունների ֆունկցիոնալացման նոր մեթոդաբանությունների մշակման ուղղությամբ, մասնավորապես հետաքրքրություն են ներկայացնում ազոտ պարունակող հետերոցիկլերը և C-H ֆունկցիոնալացումը:

Դեղաբանական հետազոտությունները կշարունակվեն ՆՕՔԻ-ի 2 լաբորատորիաներում հետևյալ ուղղություններով՝ սիրտ-անոթային համակարգի, չարորակ նորագոյացումների, կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող միացությունների և կիրառական վիրահատության նպատակներին ծառայող դեղամիջոցների որոնում: Կիրականացվի Կենտրոնում արտադրվող դեղանյութերի և պատրաստի դեղաձևերի որակի կենսաբանական հսկում՝ թունականության, արդյունավետության և մանրէազերծության դեղագրքային փորձարկումներ:

ՄԿՈՒԿ-ի լաբորատորիաներում կշարունակվեն միացությունների կառուցվածքի վերծանման, ճշգրտման և վերլուծության հետազոտությունները: ՄՄՌ սպեկտրոսկոպիայի ժամանակակից միաչափ և կոռելյացիոն երկչափ մեթոդներով միացությունների կառուցվածքի և մաքրության աստիճանի ուսումնասիրումը թույլ կտա պարզել բազմաթիվ ռեակցիաների մեխանիզմները, ստացված միացությունների կառուցվածքային առանձնահատկությունները, քիմիական կապերի երկրաչափությունը, երկրաչափական իզոմերների նույնականացումը և քանակը:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ __________ (Սահակ Գասպարյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ __________ (Սահակ Գասպարյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 6
«29» հունվարի 2024 թ.
N 1-20/24-1/STCOP-KIOM պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

**«Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում: Կիրառական նպատակներով նոր նյութերի ստեղծում»** ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

| հ/հ | Իրականացվելիք միջոցառման | | | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | կատարման ժամկետները |
| 1 | Օրգանական միացությունների սինթեզի եղանակների մշակում և կիրառում: | Իրականացնել ուսումնասիրություններ հետերոցիկլիկ, չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում | 60 նոր օրգանական միացության սինթեզ և կառուցվածքի ուսումնասիրում | 03.01.2024-01.04.2024 |
| 2 | Օրգանական միացությունների սինթեզի եղանակների մշակում և կիրառում: | Իրականացնել ուսումնասիրություններ հետերոցիկլիկ, չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում | 80 նոր օրգանական միացության սինթեզ, կառուցվածքի և կենսաբանական ակտիվության ուսումնասիրում | 01.04.2024 - 01.07.2024 |
| 3 | Օրգանական միացությունների սինթեզի եղանակների մշակում և կիրառում: | Իրականացնել ուսումնասիրություններ հետերոցիկլիկ, չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում | 90 նոր օրգանական միացության սինթեզ, կառուցվածքի և կենսաբանական ակտիվության ուսումնասիրում | 01.07.2024-01.10.2024 |
| 4 | Օրգանական միացությունների սինթեզի եղանակների մշակում և կիրառում: | Իրականացնել ուսումնասիրություններ հետերոցիկլիկ, չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում | 90 նոր օրգանական միացության սինթեզ, կառուցվածքի և կենսաբանական ակտիվության ուսումնասիրում | 01.10.2024-30.12.2024 |

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ ____________ (Սահակ Գասպարյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ ____________ (Սահակ Գասպարյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*